

Գաղարքա Ա. Ա.

Պատկան հիշ

Հոգաբարձուհի.

616.2  

---

Ա-35

ԲԺ. Ն. ՆԱԶԱՐՅԱՆ

29 JUL 2010

ՊԱՀՊԱՆԻՐ  
ԼՍՈՂՈՒԹՅՈՒՆԴ

616.2  
Է-35

ՅԵՐԵՎԱՆ

ՀԱՅՊԵՏՏՐԱՍ

Բժ. Ն. ՆԱԶԱՐՅԱՆ

616.2  
7-35 սյ.

ՊԱՀՊԱՆԻՐ  
ԼՍՈՂՈՒԹՅՈՒՆԴ

ՅԵՐԵՎԱՆ

ՀԱՅՊԵՏՐԱՏ

1940



1868  
40

Д-р Н. Наджарян  
БЕРЕГИ СЛУХ

Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.

Հոողությունը անսողության հետ հավասար ամենա-  
կարևորն է մեր հինգ զգայարաններից, վորոնց մի-  
ջոցով մենք կողմնորոշվում ենք մեզ շրջապատող  
աշխարհում:

Թե ինչ նշանակութուն ունի լոողությունը մարդու  
համար, այդ պարզ է ամեն մեկին: Հոողության վոչ  
միայն լիակատար, այլև մասնակի կորուստը չափա-  
զանց ծանր դրություն է առաջ բերում մարդու մեջ:

Մնացածում լինելով միանգամայն առողջ և աշ-  
խատունակ, մարդ յեթե խլացել է, նա կարծես թե  
կարվում է իրեն շրջապատող մարդկանցից: Այդ դրու-  
թյունը հաճախ պատճառ է դառնում, վոր այդպիսի  
մարդը թողնում է իր սովորական գործը, հեռանում  
է ընկերներից, մեկուսանում է և վերջի վերջո կորց-  
նելով մարդկանց հետ շփվելու հնարավորությունը՝  
դառնում է սակավ աշխատունակ, հաշմանդամ:

Մեզ շրջապատող աշխարհը լի չի ձայների անհա-  
մար բազմազանությամբ: Մարդկային առողջ ականջն  
ըմբռնում է («լսում է») նրանց մեծ մասը: Սակայն  
մարդու լողակյան որդանի ձայնըմբռնման ընդու-  
նակությունն էլ ունի իր հայտնի սահմանները, վորից  
այն կողմը նա անկարող է դառնում:

Հետևյալ հասարակ փորձը կողնի մեզ այդ հա-  
կանալու: Հաստ տախտակին իրարից վոչ շատ հեռու  
յերկու մեխ խփենք: Նրանցից մեկին կապենք բարակ

ու ամուր թել և տանենք նրան մյուս մեխի վրայով: **Յեթե մենք թելը ձգենք և սկսենք փոքրիկ հարվածներ տալ այս ձևով պատրաստած լարին, նա ձայն կարձակի, և վորքան ուժեղ ձգենք թելը, այնքան բարձր կլինի այդ ձայնը:**

Մենք պարզ նկատում ենք, վոր այդ ձայնն առաջանում է տատանվող թելից: Յեթե թելի լարվածությունը թուլացնենք, նրա արձակած ձայնը կցածրանա, և վորքան ավելի թուլացնենք, այնքան ավելի ու ավելի կցածրանա: Այդպես աստիճանաբար թելը թուլացնելով՝ կգա մի վայրկյան, վորից հետո մենք կնկատենք, վոր թեև լարը տատանվում է, սակայն նա ձայն չի հանում: Ամենացած ձայնը, վոր մենք ընդունակ ենք լսելու, այն ձայնն է, վոր առաջանում է լարի՝ մեկ վայրկյանում 16 անգամ տատանումից: Այդ մեր լսողության ստորին սահմանն է: Յեթե լարը մեկ վայրկյանում 16 անգամից պակաս տատանվի, մեր ականջն այլևս վոչ մի ձայն չի լսի:

Վորքան արագ է տատանվում առարկան, այնքան բարձր ձայն է ստացվում նրանից: Ամենաբարձր ձայնը վոր մեր ականջը կարող է ըմբռնել, այդ այն ձայնն է, վորն ար ակվում է մեկ վայրկյանում մոտ 22,000 տատանումից: Այդ մեր լսողության վերին սահմանն է:

Չայնն ըմբռնելու կարողությունը բոլոր մարդկանց մոտ միատեսակ չէ. նորմալ լսողություն ունեցող մարդկանց մեջ էլ կան տարբեր լսողներ: Իր վողջ կյանքում վորտորությամբ զբաղվող անտառի բնակիչը, վորի համար վորքը միակ զբաղմունքն է հանդիսանում, անհամեմատ ավելի նուրբ լսողություն

ունի, քան քաղաքաբնակ մարդը: Ամերիկական ռազմասեր հնդկացիներն ականջը դեռնին դնելով մե քանի կիլոմետր հեռավորությունից լսում էլին ձիարշավ խմբի դրոփյունը:

Վորոշ կենդանիների ձայնը մոտման կարողությունն ավելի զարգացած է, որինակ. շան, անտառային թռչունների և այլն: Վայրի կենդանիներից շատերը հեշտությամբ ըմբռնում են այնպիսի ձայներ, վորոնք մարդկային լսողական օրգանը լսելու անկարող է:

Սուր լսողությունը մեր կյանքի վորոշ բնագավառներում շատ լուրջ նշանակություն ունի, որինակ՝ ռազմական գործում: Այնպիսի ռազմական մասնագիտության համար. ինչպիսին է, որինակ, «լսողները» աշխատանքը, վորոնք ձայնն ուժեղացնող հատուկ գործիքներով հետևում են հակառակորդի ասվառնակների մոտենալուն, անհրաժեշտ է ունենալ գերազանց լսողություն:

Հաստատված է, վոր կույրերն ավելի նուրբ լսողություն ունեն, քան տեսունակները: Այստեղ բնությունը կարծես թե մեկ զգայարանի կորուստը փոխհատուցում է մյուսի առավել աճմամբ:

Ականջների հիվանդությամբ շատ հաճախ տառապում են յերեխաները: Չխտելով իլանալու մասին՝ լսողության հասարակ նվազումն անգամ աշակերտին թույլ չի տալիս լավ սովորել, դրանից նա դառնում է թույլ և հետամնաց:

Բավական է ուշադրությամբ դիտենք մեր չորս կողմը, վորպեսզի տեսնենք, թե վորքան շատ են լսողության խանգարումով տառապողները:

Թվական տվյալներով խուլ ու համրերի թիվն ամբողջ ԽՍՀՄ-ում յերկու հարյուր հազարից անցնում է, իսկ միայն խուլ ու դժվար լսողները թիվը շատ ու շատ ավելի մեծ է: Այս յերեմույթն իսկական աղետի բնույթ է կրում, վորի ամբողջ ծանրությունն ավելի ակներև կդառնա, յեթե ուշադրության առնենք այն հանգամանքը, վոր խուլերի և դժվար լսողների այդ թվից խոշորագույն մասը կարող եր իր լսողությունը պահպանած լինել, յեթե ժամանակին դիմած լիներ համապատասխան միջոցների:

**ՎՈՐՈՆՔ ԵՆ ԱՅԴ ՅԵՐԵՎՈՒՅԹԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, ցարիզմի որով, ժողովրդական մասսաների կուլտուրական մակարդակն այն աստիճան ցածր եր, վոր ազդաբնակչության մեծամասնությունը (մանավանդ գյուղերում) վոչ միայն չեր ձգտում բժշկել ականջի հիվանդությունները, այլև հաճախ վախենում եր բժշկական ոգնության դիմել, նախապատվություն եր ասպիտոզանահան հեքիմական և պառավական միջոցներին:

Սորհրդային բժշկությունը, վոր պայքարում է ազգայնակչության առողջության և դիմացկունության համար, իր նպատակն և համարում այն բոլոր պայմանների վերացումն ու կանխումը, վորոնք փաստակար են աշխատավորության առողջության համար:

Ներկայումս մեր Միության ամբողջ տերիտորիան ընդգրկված է բուժական խիտ ցանցով: Ամենահեռավոր վայրերի բնակչությունն էլ հնարավորություն սւնի բժշկական ոգնություն բառնալու:

Այնուամենայնիվ, հարկավոր է ասել, վոր լայն մասնաները բավականաչափ ծանոթ չին ականջի հիվանդություններին, և այդ պատճառ ե դառնում, վոր ականջի հիվանդությունների թիվը, շատ հաճախ էլ նրանց հաջարդող խությունը կամ լսողության զրգվարացումը, դեռ այժմ էլ բավականաչափ խոշոր ե: Ի՞նչ է խությունը, ինչից է պատահում այն և ի՞նչպես պաշտպանվել նրանից:

Վորպեսզի այդ հարցերի պատասխանը պարզ լինի, անհրաժեշտ է համառոտակի ծանոթանալ մեր լսողության որդանի կազմությանը:

**ԻՆՉ Ե ՆԵՐԿԱՅԱՑԱՑՆՈՒՄ ԻՐՆԵՆՑ ՄԵՐ ԱԿԱՆՉԸ**

Մեր ականջը հատուկ կազմություն ունեցող մի որդան է, վոր բաղկացած է յերեք մասերից՝ արտաքին ականջ, միջին ականջ և ներքին ականջ:

Արտաքին ականջին պատկանում են ականջակոնքը և խողովակի ձևով զեպի ներս անցնող նրա անմիջական շարունակությունը — արտաքին լուսնցքը: Արտաքին լուսնցքի ներքին ծայրը ծածկված է բարակ և առաձգական մի թաղանթով՝ թմբկաթաղանթով: Այստեղ էլ արտաքին ականջը վերջանում է: Թմբկաթաղանթի հետևում գտնվում է մի փոքր խոռոչ, վորն անվանվում է թմբկային խոռոչ կամ միջին ականջ:

Թմբկային խոռոչն ող բովանդակող մի փոքր տարածություն է, վորտեղ տեղավորված են յերեք հատ մեկը մյուսի հետ կապված վոսկրիկներ՝ լսողական վոսկրիկներ:

Միջին ականջի տաշնապատի ստորին մասում գտնվում է մի բացվածք, վորից սկզբում է խողովակաձև մի անցք. նրա մյուս ծայրը բացվում է քթըմպանում: Այդ անցքը Յեվստախյան խողովակն է: Նա միացնում է միջին ականջի խողովակը քթըմպանի հետ: Յեվստախյան խողովակի միջոցով կատարվում է միջին ականջի ոդափոխութունը:

Միջին ականջից ավելի դեպի ներս տեղավորված է լսողական որգանի ամենակարևոր և ամենաբարդ մասը — ներքին ականջը:

Ականջի այդ մասը բաղկացած է յերկու առանձին բաժիններից: Նրանցից մեկում տեղավորված է լսանյարդի վերջնական ցանցը, վորն ըմբռնում է դրսից յեկած ողի ձայնական տատանումները և այն փոխանցում է օւղեղի մեջ գտնվող լսողական կենտրոնին:

Ներքին ականջի մյուս մասում գտնվում է մեր մարմնի հավասարակշռության կանոնավորիչը, այսպես կոչված՝ վեոտիբուլար աստրատը:

Վեոտիբուլար ապարատի ֆունկցիան որգանիզմի համար չափազանց մեծ նշանակութուն ունի: Նրա շնորհիվ մենք վորոշում ենք մեր մարմնի դիրքը տարածության մեջ և հնարավորութուն ենք ունենում պահպանելու նրա մշտական հավասարակշռութունը: Այդ որգանի բոլորովին անխալ գործելն անհրաժեշտ է մանավանդ այն մարդկանց համար, վորոնց աշխատանքն ընթանում է հատուկ պայմաններում, որինակ՝ ոդաչուների:

Կան մարդիկ, վորոնց վեոտիբուլար ապարատն

անկայուն է և հեշտ գրգռվող: Այդպիսիներն ողաչու լինել չեն կարող:

Վեոտիբուլար ապարատի գրգռման որինակ է հանդիսանում այսպես կոչված՝ ծովախոր, վորով տառապում են շատերը նավի որորումներից:

Ներքին ականջը շատ մոտ է հաղորդակցված ուղեղին: Այդ պատճառով, յեթե ներքին ականջը թարախային բորբոքում ստանա, թարախը շատ արագ է հեշտությամբ կարող է անցնել ուղեղի պատյանի վրա և առաջ բերել նրա բորբոքումը՝ մենինգիտ — չափազանց լուրջ և վտանգավոր մի հիվանդութուն, վորը համարյա միշտ վերջանում է հիվանդի մահով, յեթե շտապ անհրաժեշտ միջոցներ ձեռք չառնվեն:

Անմիջապես ականջի խիունջի հետևին կարելի չէ շոշափել կիսակլորածև մի վոսկր: Դա այսպես կոչված պտկածև յելուստն է: Պտկածև յելուստի մեջ գտնվում են ող բովանդակող բաղմաթիվ բջիջներ: Միանալով մեկը մյուսի հետ՝ նրանք մոտենում են միջին ականջի խողովակին, վորի հետ անմիջական կապ ունեն: Ենորհիվ այդ հանգամանքի, միջին ականջի թարախային բորբոքումների ժամանակ թարախը զանազան պատճառներով յերբեմն անցնում է այդ բջիջների մեջ և առաջ է բերում այդ յելուստի թարախային բորբոքում — մաստոիդիտ — լուրջ և բավական վտանգավոր հիվանդութուն, վորի բուժման համար ձաճախ անհրաժեշտ է լինում դիմել հատուկ փրահամուսն:

ԽԼԱՑՄԱՆ ՅԵՎ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԻՋԵՑՄԱՆ  
ՊՍՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ականջի տարրեր խախտումներն ու ֆլաուզումները  
լսելու ընդունակութեան մեջ առաջացնում են համա-  
պատասխան փոփոխութիւններ, ըստվորում վորբան  
լուրջ և ֆլաուզածքը, այնքան ավելի ականջի համար  
գծվար և դառնում ձայնն ըմբռնելը և այնքան ավելի  
մեծ և լինում լսողութեան իջեցումը:

Վերև ասածից արդեն պարզ և, վոր լսողութիւնը  
վատանալու համար անհրաժեշտ չե, վոր ամբողջ լրտ-  
դական որգանը ֆլաուզած լինի, բավական և, յեթե  
ֆլաուզած և նրա մի վորեւե մասը միայն:

Լսողութեան իջեցման պատճառների մեծ մասը  
կարելի չե բաժանել յերկու խմբի:

1) Ականջի ֆլաուզելը այսպես կոչված մեխանի-  
կական պատճառներից:

2) Ականջի ֆլաուզելը զանազան ականջային հի-  
վանդութիւններից:

Այժմ դրանք քննենք մանրամասնորեն:

Շատերը վատ սովորութիւն ունեն իրենց ականջ-  
ները խառնշտելու զանազան իրերով (լուցիով, փայտի  
կտորով, ձեռագործի ճաղով և այլն): Այդ անելիս  
լսանցքի մաշկի վրա առաջանում են աննկատելի  
չանգովածքներ, վորոնք հեշտութեամբ կարող են կեղ-  
տոտվել, վարակվել և պատճառ դառնալ հետագա հի-  
վանդութիւնների առաջացման: Բացի դրանից, ական-  
ջը խառնելիս բավական և անզգույշ կերպով հրել  
ձեռքը, վորպեսզի լսանցքում գտնված իրը վիրավորի  
թմբկաթաղանթը, նման դեպքերը հազվագյուտ չեն:  
Հաճախ այդ տեսակի ֆլաուզածքներ իրար պատճա-

ռում են առանց մեծերի հսկողութեան խողացող յ-  
բեխաները:

Շատ լուրջ ֆլաուզումներ և հետագա հիվանդութիւն-  
ներ կարող են պատճառել ականջին՝ արտաքին լսանց-  
քին ընկած ոտար մարմիններն անձամբ հանելու  
փորձերը:

Հաճախ յերեխաներն իրենք իրենց, կամ մեկը  
մյուսի ականջն են դցում զանազան մանր առարկա-  
ներ՝ ուլունքներ, հատիկներ, մանր կորիզներ և այլն:

Անհրաժեշտ և գիտենալ, վոր արտաքին լսանցքի  
մեջ ընկած առարկան վորքան ել մոտ յերեկա, չպետք  
և փորձել հանել նրան անձամբ: Լսանցքն  
այնպիսի առանձնահատուկ կազմութիւն ունի, վոր  
ինչով ել փորձելու լինեն դուրս հանել ականջն ըն-  
կած առարկան, նա ավելի խորը կգնա և յեթե հանե-  
լու փորձը շարունակելի, հետևանքը կլինի այն, վոր  
ավելի ու ավելի խոր գնացող իրը կպատուի թմբկա-  
թաղանթը և կընկնի միջին ականջը: Այս կարող և  
առաջ բերել չափազանց լուրջ և վտանգավոր բարդու-  
թիւն:

Ուրեմն յեթե ականջի մեջ ոտար մարմին և ընկել,  
յերբեք չի կարելի փորձել հանել այն անձամբ, կամ  
այդ գործը հանձնարարել մեկ ուրիշին, այլ անպա-  
ման պետք և դիմել բժշկի, յեթե հնարավոր և ականջի  
մասնագետի, վորը հատուկ ձևի լվացման միջոցով  
այդ իրը կհանի հեշտութեամբ և առանց ցավեցնելու  
նույնը վերաբերում և և այն դեպքերին, յերբ արտա-  
քին լսանցքն են ընկնում զանազան միջատներ: Նրանց  
անձամբ հանելու փորձը նույնպես կարող և ֆլաու-  
զար լինել: Այդ դեպքում, նախ քան բժշկին դիմելը,



միայն մեկ բան ե թույլատրվում անել՝ սպանել մի-  
ջատին, վորպեսզի նա չշարժվի լսանցքում: Իրա հա-  
մար բավական ե լսանցքի մեջ անել մի քանի կաթիլ  
գուլացրած վորևե հեղուկ յուղ ե պահել այնտեղ  
5—10 րոպե<sup>1)</sup>:

Այտուդից պարզ ե, վոր մի այնպիսի դատարկ  
բան, ինչպես ականջի մեջ ընկած իրն ե, անդիտակ-  
ուխիան հետևանքով, կամ անփուլթ վերաբերվելու  
դեպքում, կարող ե լուրջ ֆլասաներ պատճառել ական-  
ջին ե, հետևապես, թուլացնել լսողությունը:

Թճմկաթազանթը հեշտությամբ կարող ե ֆլաավել  
նաև լսանցքի մեջ գտնվող ողի ճնշման հանկարծակի  
փոփոխությունից:

Որինակ՝ ականջին խփելուց լսանցքի միջի ողի  
ճնշումը միանգամից բարձրանում ե, վորից կարող ե  
թճմկաթազանթի պատուվածք առաջանալ: Նույնը կա-  
րող ե տեղի ունենալ ողի նոսրացումից (ականջը համ-  
բուրելուց):

Ականջին ֆլասող պատճառներից մեկն ել պետք ե  
համարել արտաքին լսանցքի մեջ ջուր լցվելը: Այդ  
գլխավորապես վերաբերում ե ծծկեր յերևխաներին  
Նրանց ականջի մեջ ջուր լցվելը կարող ե նպաստա-  
վոր պայմաններ ստեղծել արտաքին ականջի վորոշ  
հիվանդությունների զարգացման համար:

Այդ պատճառով, վորպեսզի ականջները ջրով չլցվեն,  
հարկավոր ե նրանց լողացնել նստած կամ կիսանստած  
վիճակում, հետևելով, վոր յերևխայի գլուխը լինի  
ջրից բարձր:

<sup>1</sup> Հեղուկի մեջ միջատը կազանվի շնչաուլթյան արգելման  
պատճառով:

Յերբեմե ականջը ջուր լցվելը վտանգավոր ե նաև  
մեծահասակներին համար, գլխավորապես այն դեպքում,  
յերբ անցյալում, (թեկուղ շատ վաղուց) տեղի յե ու-  
նեցել ականջի թարախահոսություն: Արտաքին լսանց-  
քը ջուր ընկնելուց կարող ե հին հիվանդությունը  
կրկնվել, կամ յեղածը վատանալ: Այդ հավասարապես  
վերաբերում ե և յերևխաներին, և մեծերին: Այդ-  
պիսի դեպքերում հարկավոր ե արտաքին լսանցքը  
մշտապես չոր պահել: Իսկ լողանալու ժամանակ ա-  
կանջները ջրից պահպանելը շատ հեշտ ե, բավական  
ե լսանցքը պինդ փակել մի կտոր բամբակով, վորը  
պետք ե նախորոք թրջված լինի վորևե հեղուկ յուղի  
մեջ ե մզած (դրա համար կարելի յե վերցնել օովո-  
րական ձեթ):

Չպետք ե մոռանալ, վոր չի կարելի այդ նպատա-  
կով ողտադործել չոր բամբակ, վոր վոչ միայն չի  
պահպանում ջրից, այլև, ընդհակառակն, ինքն ե ջուրը  
ծծում իր մեջ: Առողջ ականջի մեջ ջուր ընկնելը  
վտանգավոր չե:

Հաճախ ականջի ֆլասման պատճառ են հանդիսա-  
նում զանազան նախապաշարուժներն ու հին կենցաղի  
ֆլասակար օովորությունները, վորոնք տեղ-տեղ դեռ  
մնացել են մեր ազգաբնակչության հետամնաց խա-  
վերի մեջ, իբրև անցյալի ժառանգություն:

Այդպիսիներն են, առաջին հերթին, պառավական  
այլ և այլ միջոցներին դիմելը, վորոնք վոչ միայն  
չեն ողնում հիվանդին, այլև շատ անգամ վատացնում  
են յեղած դրությունը: Հնուց մնացած օովորություն  
ե ականջի բլթալների ծակելը, ողեր անցկացնելու  
համար, վորը վորոշ դեպքերում կարող ե արյան վա-

բակման պատճառ դառնալ. բացի դրանից, հաճախ տեղանշի համապատասխան մասի ճեղքվածք եւ աստղ բերում:

Ականջ «քաշելը» հեշտութեամբ կարող եւ ականջա-կոնքի եւ արտաքին լսանցքի կրճիկի կամ մաշկի պատուվածք առաջ բերել եւ ականջն աշխարհակել (կամ մի ուրիշ բարդութեան առաջացնել): Դիւրին պինդ խփելը, կամ գլխի սաստիկ դիպչելը մի վորեւ բանի կարող եւ խլանալու պատճառ դառնալ: Ականջին խփելը կարող եւ ինչպես վերին ասված եւ, թմրկա-թաղանթի պատուվածք առաջ բերել:

Պատահում են դեպքեր, յերբ յերեխան ծնվում եւ խուլ: Այդպիսի մարդուն անվանում են ի ծնե խուլ: Մեծ մասամբ այդ լինում եւ ներքին ականջում ի ծնե յեղած թերութեան ներքին:

Ի ծնե խլութեան առաջանալու պատճառ կարող են դառնալ ծնողների ալիոնոլիզմը, կամ, յեթե հղիու-թեան ժամանակ կինը հարվածներ կամ ջարդվածքներ եւ ստացել: Ասպազ մորը հարկավոր եւ ամեն տեսա-կետից պահպանել, վորովհետեւ անբարենպաստ Ֆիզի-կական կամ հոգեկան ցնցումները կարող են անդրա-դառնալ սաղմի զարգացման, ինչպես նաև նրա լսողական գործարանի վրա:

Պատավական միջոցների ու հեքիմութեան վնաս-ներին այստեղ եւ հաճախ ենք հանդիպում: Յերբեմն, որինակ, յերեխայի ի ծնե խլութեան պատճառ հան-գիտանում եւ արավման եւ դանդի վնասումները, վորոնց յենթարկված ե յեղել յերեխան յերկար տեւող ծննդի միջոցին, մանավանդ տատմայրերի անձնու առողջու-թեան» գեպքում:

Մծկեր յերեխային յերկար ժամանակ որորելը կա-րող եւ նույնպիսի անդրադառնալ նրա նյարդային հա-մակարգութեան եւ լսողութեան վրա:

Հին կենցաղի այս վնասակար մնացորդներէ ու սովորութեաններէ դեմ պայքարը եւ նրանց արմատա-խիլ անելը քիչ ողնութեան չեն հասցնի խուլութի ու դժվար լսողների թվի պակասեցմանը:

**ԱԿԱՆՋԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Լսողութեան խանգարում առաջ բերող պատճառնե-րի շարքում առաջին տեղը պատկանում եւ ականջի հիվանդանալուն: Վերևում ասացինք, վոր ականջի հի-վանդութեաններով ավելի հեշտութեամբ եւ ավելի հա-ճախ հիվանդանում են յերեխաները, Այդ յերեւելութե-բացատրվում եւ նրանով, վոր յերեխաների լսողութեան որդանը, ինչպես ասեալսարակ մանկան ամբողջ որ-գանիզմը, շնորհիվ նրա առանձնահատուկ կազմվածքի, ավելի քիչ եւ դիմացկուն եւ ավելի հեշա ե յենթակա հիվանդութեանների, քան մեծերինը:

954  
04

Ականջի բոլոր հիվանդութեաններից մեկը պատա-հում եւ ավելի հաճախակի — դա միջին ականջի թարախային բորբոքումն է: Լսողութեան ծան-րացում ամենամեծ քանակով առաջ եւ բերում եննց այս հիվանդութեանը:

Միջին ականջի թարախային բորբոքումը կարող չկսվել կամ ինքնբոստինքյան առանց նկատելի ար-տաքին պատճառի, կամ կարող եւ առաջանալ վարդեա ուրիշ հիվանդութեան բարդութեան, գլխաւորապես ուրիշ հիվանդութեան բարդութեան, գլխաւորապես զրիպպի, ջուրթի, կարմրուկի, ծաղկի, եւ հաճախ այսպիսի կնշված ճեղքարակ հարբութի: Այդ հիվան-



գութ յունենի ժամանակ վարակը քթից և քթմպանից անցնում և միջին ականջը Յեկատախյան խողովակի միջոցով (բայց կարող և անցնել նաև ընդհանուր արյան շրջանառության միջով):

Պտվորաբար հիվանդության սկզբում ականջը սրտնվում է: Հետո առաջանում են դավեր, վորոնք պարբերաբար կարող են լինել շատ ուժեղ: Յիթե հիվանդությունն այս շրջանում չի հանդարտվում, միջին ականջում սկսում և կուտակվել բորբոքումային հեղուկ, վորը թմրկաթաղանթը պատում է և սկսում է դուրս թափվել արտաքին լսանցքով: Պատահում է, վոր հիվանդությունը հենց այս շրջանում էլ վերջանում է. թարախահոտությունը դադարում է և պատված թրմկաթաղանթը միանալով՝ ականջի նախկին առողջ դրությունը վերականգնվում է: Ուրիշ դեպքերում հիվանդությունն ստանում է անբարենպաստ ընթացք: Այդ կասակցություններ, մանավանդ յիթե ժամանակին ճիշտ բուժման չեն դիմում, թարախահոտությունը անում է յերկար, հաճախ ամիսներ, իսկ յերբնիստարիններ: Թմրկաթաղանթը և լսողական վոսկրիկները նեխվում են, հալչում և ամբողջ միջին ականջը դատում է մի ընդհանուր թարախահոտ խոռոչ:

Այս դրությունը հիվանդին սպառնում է մի շարք վտանգավոր բարդություններով:

Միջին ականջից թարախը կարող է անցնել դեպի պտեղած և յելուտի բջիջները: և առաջ բերել յելուտի թարախային բորբոքում — մաստոիդիտ, իսկ այդ իր հերթին կարող է պատճառ դառնալ հիվանդի կյանքին սպառնացող բարդությունների (ուղեղի խոշոր անոթների հարվածում, ուղեղի արացեսներ և այլն): Ուրիշ

գեղջրում թարախը միջին ականջից կարող է անցնել դեպի ներքին ականջը, վորտեղ բացի լսանյարդին հարվածելուց՝ համարյա միշտ ազդում է նաև այնտեղ գտնվող վեստիբուլար ապարատի վրա: Այս վերջինիս հիվանդանալը բնորոշվում է չափազանց ծուր դրություններ. հիվանդը, հավասարակշռությունը կորցնելու պատճառով, զրկվում է իր մարմինը տարածություն մեջ կողմնորոշելու հնարավորությունից: Միաժամանակ տեղի յեն ունենում նաև ուրիշ հատուկ յերևույթներ՝ ուժեղ գլխապտույտ և այլն: Միջոցներ ձեռք չառնելու դեպքում թարախը ներքին ականջից հեշտություններ թափանցում է ուղեղը և առաջ է բերում կյանքի համար չափազանց վտանգավոր բարդություններ (մենինգիտ, ուղեղապայայանի բորբոքում և այլն):

Հստակապես որդանի վրա բացասաբար ազդող հանգամանքներից անհրաժեշտ է նշել զանազան յերկարատև բարձր աղմուկների փաստակար ազդեցությունը: Այդ պատճառով էլ վորոշ արտադրություններում, վորտեղ ըստ իրենց առանձնահատկությունների մըշտական աղմուկ կա, հատուկ միջոցներ են ձեռք առնվում այդ աղմուկը լռեցնելու համար:

Հստակության վրա մշտական աղմուկի բացասական ազդեցության որինակ կարող է հանդիսանալ այն փաստը, վոր խոշոր քաղաքների բնակիչները, վորոնք իրենց ամբողջ կյանքն անց են կացնում քաղաքային աղմուկի մեջ, ըստ տոկոսային հարաբերությունների ավելի շատ են յենթակա լսողությունների փաստացիորի, քան դյուզում ապրողները<sup>1</sup>:

<sup>1</sup> Մեծ քաղաքներում ներկայումս միջոցներ են Առջ առնվում փողոցի աղմուկը բացնելու համար (աղմուկ են առաջանում գլխավորապես անընդհատ յերթեվելող տրամվայները, ավտոմեքիկները, փողոցներում դրված բարձրախոսները և այլն):

Գարոյն և պատանել, վոր բարեհաջող պայմաններում վերոհիշյալ բարդություններէց վոչ մեկն ել չառաջանա, բայց, այնուամենայնիւ, յերկարատե թաթախահոտությունը լսողական որդանխմել առաջացնում է այնպիսի խոր վերփոխություններ, վոր լսողությունը մեծ չափով դժվարանում է, կամ բոլորովին կորչում է և հիվանդն այդ ականջով դառնում է կամ դժվար լսող կամ քլորովին խուլ:

Մինչև այժմ ել դեռ կարելի չէ հանդիպել մարդկանց, վորոնք ականջից թարախ դալը, մանավանդ յեթի հիվանդը փոքր յերեւա յի, համարում են դատարկ բան, անմեղ և անվտանգ մի հիվանդություն, վորը կարելի չէ չբուժել, կամ, լավագուշն դեպքում, սկսում են բուժել անական միջոցներով:

Միանգամայն պարզ է, վոր այդպիսի «բուժումը» միայն ֆլաստ է բերում և այդ տեսակի մարդիկ միշտ դառնում են իրենց տգիտության զոհը:

Հոկայսական է այն ծնողների մեղքը, վորոնք իրենց անհոգության կամ բժշկականության նկատմամբ դենեցած թերահավատության պատճառով իրենց յերկախներին դարձնում են դժվար լսող:

Ականջի յուրաքանչյուր հիվանդություն հենց սկզբից և վորքան կարելի չէ շուտ պետք է յենթարկվի ճիշտ բուժման: Անհրաժեշտ է գիտենալ, վոր վորքան ուշ սկսվի ականջի բուժումը, այնքան յերկար ժամանակ կպահանջվի նրա համար և այնքան ել քիչ կլինի հավանականությունը, վոր հիվանդությունը բոլորովին կանցնի և կվերականգնվի նորմալ լսողությունը:

Այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են կար-

մըրուկը, ըստիշը, գրիպը, մենինգիտաք և ուրիշները, քիչ չի պատահում, վոր առաջ են բերում նաև ներքին ականջ ֆլաստածք, առանց նախորդող թարախահոտության, շնորհիվ այն բանի, վոր տվյալ հիվանդության մանրների թույնը ներծծվում է ականջի մեջ: Դրա հետևանքը համարյա թե միշտ լինում է լրիջ խուլությունը: Բժշկի ժամանակին հասցրած ոգնությունն այստեղ ևս կարող է (վորոչ չափով) ապահովել լսողության անվնասությունը:

### ԽՈՒՂ ՈՒ ՀՍՄՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Յեթի մեծերի խլանալը հանդիսանում է մի ծանր ֆիզիկական պահանջություն, ապա յերեխայի խլությունն ավելի ևս վտանգավոր է:

Վաղ մանկական հասակում դեռ խոսել չսովորած յերկախ խլանալու դեպքում մնում է նաև համը, վորովհետև չլսելով խոսվածքը՝ նա չի սովորում բառեր, առարկաների անուններ և այլն:

Յեթի յերեխան խլանում է մինչև 6—7 տարեկան հասակը, նա այլևս վոչինչ չլսելով արտիճանարար մուսուլում է բառերի նշանակությունը, առարկաների անունները և, այդպիսով, կորցնելով լսողությամբ ստուգելու կարողությունը, վոչ-յերկար ժամանակվա ընթացքում դառնում է նաև համը:

Սուլ ու համրերի մասին շատերն ունեն վոչ ճիշտ գաղափար, կարծելով, թե բացի խլությունից, խուլ ու համրն ունի նաև ինչ-վոր ուրիշ մի խախտում, վորն անհնարին է դարձնում նրա խոսելը: Պարզ է, վոր այդ յենթադրությունը սխալ է: Սուլ ու համրերը նրանք են, վորոնք ծնվել են խուլ, կամ գարձել են

խուչ վաղ մանկական հասակում և այդ պատճառով խոսել չեն սովորել կամ մոռացել են խոսելը: Փատոս-րեն նրանք միայն խուչ են և յեթե նրանց խոսելու վարժեցնեն, նրանք կխոսեն:

Ուուչ ու համբերին խոսել սովորեցնելու համար կան հատուկ դպրոցներ, մեծերի և յերեխաների համար առանձին-առանձին: Այնտեղ սովորեցնում են վոչ միայն խոսել, այլև աշակերտների հետ անցնում են սովորական դպրոցների ծրագիրը, միայն այն տարբերութեամբ, վոր ուսման տեղութեան այնտեղ ավելի յերկար եւ Մեր յերկրում խուչ ու համբ յերեխաների ուսուցումը պարագիր ե:

Ներկայումս խուչ ու համբերին խոսել վարժեցնելու սկզբունքն այն ե, վոր նրանց սովորեցնում են բառերը հասկանալ խոսողի շրթունքների շարժումներով: Յերբ խուչ ու համբը վարժվում ե և կարողանում ե հասկանալ ձայներն ու բառերը, համեմատաբար հեշտ ե դառնում նրան կարգալ ու գրել սովորեցնելը:

Նրանց մեջ շատ կան ընդունակ և շնորհալի անձնավորութեաններ, վորոնք հաջողութեամբ վերջացնում են վոչ միայն միջնակարգ, այլ նույնիսկ տեխնիկականներ ու բարձրագույն դպրոցներ: Փոքրահասակ խուչ ու համբերի համար կան հատուկ մանկապարտեզներ:

Ուուչ ու համբերը ՍՍՀՄ-ում միավորված են «Ուուչ ու համբերի համամիութենական ընկերութեան» մեջ: Նրանք մեծամասնութեամբ աշխատասեր աշխատավորներ են. նրանց մեջ շատ կան հարվածայիններ ու ոտախանովականներ:

Մեր յերկրում խուչ ու համբերը սոցիալիստական

հասարակութեան իրավահավասար անդամներ են հանդիսանում: Մուրք քաղաքացիների հետ հավասար նրանք մասնակցում են ընտրութեաններին և կարող են ընտրվել պետական որդանների մեջ: Նրանցից շատերը տանում են ղեկավար աշխատանքներ:

Մուրքովին այլ ե խուչ ու համբերի գրութեանն արտասահմանում: Բավական ե ասել, վոր կապիտալիստական յերկրներում նրանք դիտվում են վարպետութեան մարդիկ, նրանց իրավունքները կրճատվում են, վորոշ ղեկավարում նույնիսկ նրանք հավասարեցված են խելագուրկների<sup>1</sup>:

Նույնպիսի իրավագուրկ և նվաստացած վիճակում եյին խուչ ու համբերը ցարական Ռուսաստանում:

Հոկտեմբերյան հեղափոխութեանը վերականգնեց նրանց մարդկային արժանապատվութեանը և տվեց նրանց բոլոր իրավունքներն, ինչ վոր ունեն ՍՍՀՄ-ում բոլոր քաղաքացիները:

Ականջի հիվանդութեանների վիճակագրութեանը ցույց ե տալիս, վոր լսողութեան ամենածանր հարվածներ—ընդհուպ մինչև լրիվ լսողութեան—թողնում են իրենցից հետո վերեզում արդեն հիշված սուր վարակիչ հիվանդութեանները:

Կան մի քանի հանգամանքներ, վորոնք կարող են պատճառ դառնալ ի ծնե լսող ու համբութեան անաշանալուն: Նրանց մեջ նկատելի տեղ ե գրավում ծնողների արկոհոխիզմը կամ սիֆիլիսը<sup>2</sup>, մոտ ազ-

<sup>1</sup> Վորոշ կապիտալիստական յերկրներում խուչ ու համբերը խելագարների հավասար գրկված են դատարաններում վկայութեան տալու իրավունքներից:

<sup>2</sup> Արկոհոչը և սիֆիլիսի թույնը, ինչպես նաև նիկոտինը հատուկ ազդեցութեան ունեն լսանյարդի վրա:

զականներէ ամուսնութ յունը: Յետէ յերկու ծնողներն  
եւ ի ծնն խուլ ու համր են, հաճախ նրանց յերեխան  
ևս լինում ե խուլ ու համր:

**ԻՐԹԸ ՅԵՎ ԵՐՍ. ԿԱԳԸ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ՈՐԳԱՆԻ ԷՆՏ**

Այստեղ շքանկով այն մեծ հարցը վոր ներկայաց-  
նում ե իրենից քիթը ե նրա ֆունկցիաներից մեկը  
շնչելը մեր որդանիզմի համար, համառոտակի ծանո-  
թանանք հարցի այն մասին, վոր վարտերում ե  
ականջին:

Մեր խողության որդանը մեծ կախում ունի քթից,  
նրա դրութ յունից: Ինչպես արդեն գիտենք, յեվտա-  
խյան խողովակի միջոցով միջին ականջը հաղորդակ-  
ցւում ե քթոմպանի հետ:

Այդ նորմալ դրութ յունը տեղի ունի, յերբ քիթն  
առողջ ե ե ազատ ե շնչում, չկան հաճախ կրկնվող  
հարբուխներ, չկան քթում կամ քթոմպանում զանազան  
գերաճումներ, լորձաթաղանթի այտուցվածքներ ե այն,  
վորոնք կարող են խախտել յեվտախյան խողովակի  
ֆունկցիան:

Քթի վորտ ճիվանդութ յունների ժամանակ, որի-  
նակ, հարբուխի բորբոքումային պրոցեսը կարող ե  
քթից անցնել քթոմպանի լորձաթաղանթի վրա ե  
շարունակվել յեվտախյան խողովակի մեջ, իսկ այս-  
տեղից հեշտութ յամբ, ինչպես շատ հաճախ տեսնում  
ենք, կարող ե անցնել միջին ականջը:

Քթի ճիվանդութ յունների մեծամասնութ յան ժա-  
մանակ, մանավանդ սուր վարակի, ճիվանդութ ուն-  
ների դեպքում, քթի մեջ շատ լորձ ե առաջանում ե  
միկրոբներ ի բազմացման համար ստեղծվում են բա-

րենպոստ պայմաններ: Մինեւոյն ժամանակ նույն  
պատճառով հաճախ տեղի յե ունենում լողական որ-  
պանի հյուսվածքների դժմացկունութ յան իշխում:

Այսպիսի դրութ յան ժամանակ բավական ե յեր-  
բեմն ուժեղ խնչել, վոր քթից կամ քթոմպանից գեպի  
յեվտախյան խողովակը, այնպեղից ել միջին ականջը  
քշի մի քիչ լորձ: Շնորհիվ նրա մեջ յեղած միկրոբ-  
ների, սկսվում ե բորբոքումը — յերևում ե թարախ:  
Առաջանում ե միջին ականջի թարախային բորբոքում  
իբ բոլոր հետևանքներով ու հնարավոր բարդութ յուն-  
ների վտանգով:

Մի շարք հանգամանքներ կարող են խրոնիկական  
հարբուխի պատճառ դառնալ ե դժգարացնել քթով  
նորմալ շնչելը:

Քթոմպանի կամ քթի լորձաթաղանթի գերաճում-  
ները, քթի խեցիների մեկ կամ յերկու կողմանի գե-  
րաճումները, քթի միջնագատի ծովածքները ե այն,  
այդ բոլոր դժվարացնում ե քթով շնչելը ե խախտում  
են յեվտախյան խողովակի ֆիզիոլոգիական դերը:  
Իրա հետևանքը լինում ե այն, վոր թմրկաթաղանթի  
ե միջին ականջի մեջ արյան կանոնավոր շրջանա-  
ռութ ունը խանգարվում ե ե նրանց հյուսվածքների  
սնունդը նվազում ե, միջին ականջի լորձաթաղան-  
թի տոկունութ յունը պակասում ե: Այդ պատճառով  
առաջանում են մի շարք յերևութ յներ, վորոնց հետե-  
վանքով կարող ե սկսվել լողութ յան դանդաղ նվազում:

Ականջի ճիվանդութ յուններով տառապող յերեխա-  
ների հետադոտումը ցույց ե տալիս, վոր ականջներից  
ամենից հաճախ ե յերկարատև տառապում են հենց  
այն յերեխաները, վորոնք ունեն այս կամ այն ան-

նորմալութունն երբ քթի կամ քթըմպանի մեջ: Սրանից ինք ըստինքյան ըխողում է այն յիզրակացութունը, վոր քթի և քթըմպանի կարգավորումն առաջին պայմանն է հանդիսանում ականջի հիվանդութունը կանխելու համար: Իսկ յեթև ականջն արգեն հիվանդացել է, նրա բուժմանը զուգահեռ անհրաժեշտ է կարգավորել նաև քթը:

### ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ՄԻՇՏ ՀԻՇԵԼ ՀԵՏԵՎՅԱԼԸ

Սուր վարակիչ հիվանդութունների ժամանակ, յերբ քթում շատ լորձ է հավաքվում, հարկավոր է խուսափել խնչելուց: Ծայրահեղ դեպքում խնչել շատ զգուշ: Ժամկ լով քթի միայն մեկ կողմը, մյուսը թող հիշով բաց, վորպեսզի ողը յեղբունհնա դեպի դուրս:

Մեր ականջը բարդ և բավական զգայուն որդան է, վորն անհող և անուշադիր վերաբերմունքից կարող է վնասվել: Յերբ մն ականջի «ամենահասարակ» վնասումն իսկ կարող է պատճառ դառնալ լսողության հաշմության կամ մինչև անգամ մահի: Յեթև ականջի մեջ սփար մարմին է ընկել, վորպեսզի գրությունն ավելի չմանրանա, չփորձել անձամբ հանել այն, կամ մի ուրիշին տալ այդ բանն անելու: Նման դեպքում հարկավոր է անմիջապես դիմել Վժշկի, յեթև հնարավոր է մասնագետի:

Այնպիսի մարդկանց, վորոնք ունեն, կամ անցյալում ունեցել են ականջի հիվանդություն, անհրաժեշտ է զգուշանալ ականջը շուր լցվելուց: Ականջի մեջ շուր լցվելը կարող է վերակախել նախկին հիվանդությունը, կամ ավելի վատացնել յեղածը: Դրանից հեշտությամբ կարելի չէ խուսափել լողանալուց առաջ արտաքին

լուսնցքը նախորդ պինդ փակելով մի վորեև հեղուկյուղի մեջ թրջած և մզած բամբակով:

Կրծքի յերեխաներին լողացնելիս նույնպես աշխատել, վոր ականջները շուր չլցվի, դա կարող է արտաքին լուսնցքի հիվանդության պատճառ դառնալ: Լողացնել նրանց նստած կամ կիսապառկած վիճակում, վորպեսզի ականջները չբեց բարձր լինեն:

Հին կենցաղի սովորությունների մնացորդները՝ կուպիտ և անթուլլատրելի պատժի մեթոդները, ինչպիսին է ականջ քաշելը, ծեծելը, գլխին հարվածելը և այլն, կարող են վնաս պատճառել լսողության որդանին: Ականջին արված հարվածը կարող է պատռել թմբկաթաղանթը: Ականջ համբուրելը նույնպես կարող է թմբկաթաղանթի պատռվելու պատճառ դառնալ:

Ականջի հիվանդությունները և վնասումները բավական մեծ թվով առաջանում են շնորհիվ տատանների և նրանց բուժման «մեթոդների»: Ծննդաբերութան ժամանակ սխալ ողնությունը, մասնավանդ յերկար տևողության դեպքում, կարող է պատճառ դառնալ լսողության որդանի վնասվելուն: Սուր վարակիչ հիվանդությունները մեծ մասը (քութեղ, կարմրուկ, դրիպալ, մենինգիտ և այլն) հաճախ, իբրև բարդություն, առաջ են բերում ականջի հիվանդություններ: Ժափանակին բժշկին դիմելը կարող է նվազեցնել այդ վտանգը:

Ականջի հիվանդության բուժումը վորքան վաղ կազմվի, այնքան շուտ և հեշտ կը բուժվի, և ընդհակառակը: Ականջի թարախանությունը լուրջ հիվանդություն է, վորը կարող է առաջ բերել մի շարք վտանգավոր

բարդութիւններ, այդ թիւում նաև լրիվ խլութիւն  
կամ հիվանդի մահ:

Յեթե ականջի հիվանդութեան պատճառով յերե-  
կան խլանում ե մինչև 6—7 տարեկան հասակը, նա  
հեշտութեամբ մոռանում ե խոսելը և դառնում ե խու-  
ռ համբ:

Սլիտնոլիկ կամ օիֆիլիտիկ ծնողների յերեխաները  
կարող են ի ծնե խուլ լինել: Նույնը յերբեմն տեղի  
յե ունենում, յերբ ծնողները մոտ ազգականներ են  
լինում:

Մեր աշխատավոր մասսաների կուլտուրական մա-  
կարդակի անընդհատ բարձրացումը, քաղաքի և գյուղի  
բուժնապատրկման ցանցի լայնացումը, մասնազետ  
բժիշկների թվի ավելացումը, — այդ բոլորը յերաշխիք  
են հանդիսանում, վոր մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում խլութիւնն  
ու լսողութեան դժվարացումը, վորպէս անցյալի ժա-  
ռանգութիւն, հետզհետե նվազելով՝ բոլորովին կվերա-  
նան մեր առողջ, անդատակարգ հասարակութեան միջից



Պատ. խմբագիր՝ պրոֆ. Հարութիւնյան  
Լեզվական խմբագիր՝ Ն. Հարութիւնյան  
Տեխ. խմբագիր՝ Լ. Ռհանյան  
Մրբագրիչներ՝ Ա. Արղաքանյան, Բ. Ղուկասյան  
Գեղարդ սրբագրիչ՝ Յ. Տ. Մինասյան

Գլուխի լիպոր՝ 2—1044. Հրատ. 5083.  
Պատկեր 858. Տիրամ 2000.  
Թուղթ 74x105. Տպագր. 28 էջ.  
Մեկ մամ. 25600 նշան.  
Հանձնված ե արտադրութեան 29 նոյեմբերի 1939 թ.  
Ստորագրված ե արտադրութեան համար 5 հունվարի 1940 թ.  
Գեղարդի I տպարան, Յերևան, Լենինի 65



բարդություններ, այդ թիւում նաև լրիվ խլութեան  
կամ հիվանդի մահ:

Յնթե ականջի հիվանդութեան պատճառով յերե-  
խան խլանում և մինչև 6—7 տարեկան հասակը, նա  
հեշտութեամբ մոռանում և խոսելը և դառնում և խու-  
ռ համր:

Արկոհոլիկ կամ օրֆրիլիակի ծնողների յերեխաները  
կարող են ի ծնե խուլ լինել: Նույնը յերբեմն անդի-  
յի ունենում, յերբ ծնողները մոտ օգգահաններ են  
լինում:

Մեր աշխատավոր մասօաների կուլտուրական մա-  
կարդակի անընդհատ բարձրացումը, քաղաքի և գյուղի  
բուժօգուսարկման ցանցի լայնացումը, մասնադեռ  
բժիշկների թվի ավելացումը, — այդ բոլորը յերաշխիք  
են հանդիսանում, վոր մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում խլութեանն  
ու յտղութեան դժվարացումը, վորպես անցյալի ժա-  
ռանգութեան, հետզհետե նվազելով՝ բոլորովին կվերա-  
նան մեր առողջ, անդառակարգ հասարակութեան միջից



Պատ. խմբագիր՝ պրոֆ. Հարությունյան  
Լեզվական խմբագիր՝ Հ. Հարությունյան  
Տեխ. խմբագիր՝ Լ. Ռհանյան  
Սրբագրիչներ՝ Ա. Արղաքանյան, Բ. Ղուկասյան  
Գեղարվ. սրբագրիչ՝ Յե. Տ. Մինասյան

Գլուխաբեր լիազոր՝ Զ—1044. Հրատ. 5083.

Պատվեր 858. Տիրած 2000.


Թուղթ 74×105. Տպագր. 28 էջ.


Մեկ մամ. 25600 նշան.

Հանձնված և արտադրութեան 29 նոյեմբերի 1959 թ.

Ստորագրված և արտադրութեան համար 5 հունվարի 1940 թ.

Պետրատի I օգտարան, Յերևան, Լենինի 65:





ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

90 19-

Д-р Н. Наджарян  
БЕРЕГИ СЛУХ

1 из. Арм. ССР, Ереван, 1940 г.

« Ազգային գրադարան



NL0267555

5801